

լոյս հանեց, Եւրոպացի և Տաճիկ մամարանք քաշ
զուս 3—4 ղշ խօցին, տառաւ ալ Ազգային
Հիւանդանոցը աշխարհի մեծ ծառայութիւն մը
բարիք մ'ըրաւ. զի Տաճկաստանի մէջ ամբողջ
մոմերուն զինը իջեցուց, Հասկցաք, բարեկամս,
հիմա թէ՛ Տաճկաստանցի արհեստաւորը Եւրո-
պացի արհեստաւորին հետ միցելէն զատ՝ զայն
իրեն իսկ հետեւելի կընէ եղբոր Այսպէս լինելէն
յետոյ և իրրեւ Հայ մը, Հայ հաստատութիւն մը
այսչափ համրակ սեպղիտութեամբ դատելնէդ
վերջը՝ ձեզ կը թողում կշռել և վճռել թէ
Ազգային մեծ շահ մը ազգերացող այսպիսի գոր-
ծատունէ մը երաժ ապրանքներն հրապարակաւ
հասարակաց ծառայութեան անպէտ ըսն մը հը-
րատարակելը՝ (որ գործատան մը վարկը կոտ-
րել ըսել է, և այսպիսի վարկ կոտորելներ «քա-
ղաքակրթութեան», մէջ չկայ անշուշտ) ի՞նչ
ծանր կշիռ ու հետեւութիւն ունի, գործատան
տէրն եղիք ու մտածեցէք:

Ա. ԼՈՒՍՆԵԱՆ.

Օրագիր.

ՄԱՏՈՒՌ.

Հետեւեալը ուրախութեամբ ընթեր-
ցանք Փառն լրագրոյ մէջ:

Երամեան վտեմտիայը Արրահամ պէջ ուղղով
յաւերթական յիշատակ մը թողուլ Արմաշի վա-
նուց մէջ ալ, բարեհաճեր է խոստանալ նորա-
կառոյց եկեղեցւոյն մէջ մատուռ մը շինել տալ,
որոյ համար առ նուազն 500 լիրա ծախք կ'լայ:

Նորին Առեմութիւնն այսպէս յիշեալ վանքին
երեւելի բարերարաց կարգը կանցնի, և քաջայոյս
եմք, թէ իսնանալով այս վանքին միաբանական
Ուխտին արժանիքն և մեղուաջան անդու ջանա-
ցողութիւնն՝ ուրիշ շատ ձեռնտութիւններ ալ
պիտի ընէ ի քաջալերութիւն Միաբանութեան:

Փունջ Թ. 837, հոյեմ. 10

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ. — ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ՔԱՂ. ԺՈՂՈՎ. ՈՅ.

11. Պօլսոյ մերազնեայց մէջ ծաղած
դժտութիւն և յուզմունք ընդերկար չը
տեւելով՝ ուրախ եմք՝ զի շնորհիւ եռան-
դուն և ողջամիտ ազգայնոց ոմանց՝ խա-
ղաղութիւնն վերահաստատեցաւ նոցա
մէջ, և ազգային Աւարչութիւնն կազմուե-
լով՝ Պ. Կեր, Նիկողայոս Ս. Արքեպիսկո-
պոս Պատրիարքական Տեղապահ ընտր-
վեցաւ, և գործերն սկսան իւրեանց օրի-
նաւոր ընթացքները շարունակել:

Այս առթիւ Տաճկ. Հայոց Ազգ. Սահ-
մանադրութիւնն մի մեծ և փառաւոր յաղ-
թանակ տարաւ ընդդէմ Դիմակաւոր և
ապագիւս ոմանց անձանց գիշերաջան ճը-
գանց, և սպառնալից փոթորիկներն և
փառնգներն ջնջուեցան և անհետացան:

Աստ արժան կհամարիր Բ. Դան
վերջին հրամանադրէն յետոյ գումարեալ
Երեսփ. Ընդ. Ժողովոյ վերայ հետեւեալ
տեղեկութիւնքը քաղել Փառն, յորում
է նա և նորընտիր Վաղարշական Ժողովոյ
համար եղած քուէարկութիւնը, որում
կը կցեմք հետեւեալ Ընդ. Ժողովոյ մէջ
քուէարկուած Վաղ. Ժողովոյ լրացու-
ցիչ անգամոց ցուցակն ևս:

Երէկ (Նոյ. 16) ժամը 7½-ին բացուեցաւ Ե-
րեսփոխանական Ընդհանուր Ժողովոյ ատենանո-
տենապետութեամբ Աղարեցեան Սարգիս Էփէն-
տիի, ինքեպոյթեան 60 էն աւելի Երեսփոխա-
նաց՝ որ հետզհետէ 80ի չափ եղաւ, և ի ներկա-
յութեան հազարաւոր ունկնդրաց:

Նախ քան զամենայն՝ Արժեական Ժողովոյ ա-
տենապետ Սրբազանը ծանոյց Բ. Դրնէն եկած
եպարքոսական հրամանադրոյն խնայաւ, և խընդ-
րեց որ ըստ այնմ վարուի Ժողովը և պատրիար-
քարանը ներկայ տարտամ վիճակէն ելնէ:

Յետոյ ատենապետ էֆէնտին յայտնեց թէ, մի միայն բարձրագոյն հրամանին գործադրութիւնը պիտի ըլլայ ժողովոյն գործը, և թէ ուրիշ որ և է խնդրոյ վրայ վիճարանութիւն, հարցում կամ քննադատութիւն երբեք ներելի չէ:

Ասկէց յետոյ կարգացուեցաւ հրամանագիրը, որ՝ ինչպէս հանրածանօթ եղած է՝ Խրիմեան Սրբազանի հրաժարականին ընդունուած, և Քաղաքական ժողովոյն ալ հրաժարած ըլլալը ծանուցանելով՝ կը պատուիրէ որ Ընդհանուր ժողովը՝ Քաղաքական ժողով մ' ընտրէ ըստ Սահմանադրութեան, որպէս զի միանալով Կրօնական ժողովոյ հետ՝ Տեղապահ մ' ընտրէ, մինչև ցընտրութիւն պատրիարքական:

Հրամանագրոյն ընթերցմանէն յետոյ, մէկ երկու երեսփոխանք՝ ատենապետ էֆէնտին յայտարարութեան հակառակ՝ դարձեալ ուզեցին ուրիշ խնդիրներ խառնել և բաւական պնդեցին, բայց ատենապետն ընդմիջեց և վերջապէս թոյլ տուաւ:

Հետևաբար որոշուեցաւ քուէարկութիւն ընել Քաղաքական ժողովոյ մը ընտրութեան համար, և կէս ժամ հանգիստ տրուեցաւ, որպէս զի քուէները պատրաստուին:

Ատենաը երկրորդ անգամ բացուելուն, ատենապետ էֆէնտին յիշեցուց՝ Քաղաքական ժողովոյ ընտրութեան վերաբերեալ սահմանադրական յօդուածներն, և մասնաւորապէս հրաժարեալ ժողովականաց միայն երկու տարուան համար վերընտրելի չըլլալը: Ոմանք սկսան դէմ հիշել և պնդել որ վերընտրելի ըլլան, անոնց 6-7 ամիս պակաս պաշտօն վարած ըլլալը առարկելով, և անցեալ օրինակներ յիշատակելով, իսկ միւս կողմանէ պէք՝ ընդ որս և մէք՝ առաջարկեցինք համաձայնել սահմանադրութեան, և ուրիշ մ' ալ հրաժարեալ ժողովականաց վերընտրելի չըլլալուն պէտքն անհրաժեշտ համարեցաւ առ ի խաղաղութիւն ազդին: Այս միջոցին հրաժարեալ ժողովականք ալ մի առ մի յայտարարեցին թէ անկարելի է որ իրենք ընդունին այնուհետև անդամակցել Քաղաքական ժողովոյ, և հուսկ ուրեմըն ժողովն համաձայնեցաւ հրաժարեալներէն և ոչ զոք ընտրել:

Տասը վայրկեանի չափ հանգիստ տրուելէն յետոյ, քուէհամարն եղաւ, և որովհետև 76 երեսփոխանք քուէարկութեան մասնակցած էին, բացարձակ առաւելութեամբ միայն չորս հօգի ընտրուեցան, որք են՝ (քուէից կարգաւ)

Քուէ

Ստեփան էֆ. Արզումանեան	59
Առաքել պէյ Տատեան	43
Սիմոն պէյ Մագսուտեան	42
Ստեփան փաշա Արսլանեան	41

Իսկ մնացեալ տասը անդամոց ընտրութեան համար երկրորդ անգամ քուէարկութիւն պիտի ըլլայ առաջիկայ Ուրբաթ օրը:

Աւելորդ չեմք համարիր նշանակել՝ երէկուան ժողովոյն մէջ և դուրսը տեղի ունեցած երկու դէպքերն: — Ժողովոյն մէջ Մասիսի խմբագիրը ատենապետ էֆէնտինէն ծանրապէս յանդիմանեցաւ, Պէկեան էֆէնտիի մէկ խօսքին փոխանակ պատասխանելով՝ «դու հրաժարեալ ես», ըսելուն պատճառաւ, որոյ դէմ բողոքեցին երեսփոխանաց շատերը: — Ժողովոյն դուրսը ունկնդրաց բազմութեան մէջ երկու հօգի կռուի բռնուեցան՝ մէկը ներսը սիկատ խմած ըլլալուն համար, բայց կըռուարարք շուտով բաժնուեցան իրարմէ՝ խաղաղասէր անձանց շնորհիւ:

Ի վերջոյ, անհրաժեշտ պարտ կմնայ մեզ՝ իբրև խմբագիր և երեսփոխան շնորհակալութիւն մատուցանել Աղաբէգեան Սարգիս էֆէնտիի՝ ատենապետութեան պաշտօնը՝ անաչառ, խաղաղաբար և ազգասէր ոգւով վարելուն համար:

Փոքի Թ. 839, հոյեմ. 17:

Հետևեալը ևս 'նոյ. 23ի Ընդհ. Ժողովոյ արդիւնքն է:

Ինչպէս կանխաւ ծանուցուած էր՝ երեսփոխանական Ընդհանուր ժողովն երէկ տառան բանալով ի ներկայութեան մեծագոյն մասին՝ Քաղաքական ժողովոյ մնացեալ տասը անդամոց համար քուէարկութիւն ու քուէհամար եղաւ, և առաւելագոյն քուէ ստացան հետևեալ մեծապատիւ էֆէնտիներն:

Քուէ

Յարութիւն էֆէնտի Գափամաճեան	61
Մանուկ „ Մանուկեան	59
Յակոր պէյ Խանտանեան	56
Սարգիս էֆէնտի Արապեան	43
Սիմոն „ Նորատունկեան	42
Պօղոս „ Ժամակոչեան	41
Սիմոն „ Միքայէլեան	40
Ասապա „ Իկիտպաշեան	38
Ստեփան „ Խնդիրեան	35
Միքայէլ „ Մամիկոնեան	34

Ատենապետ էֆէնտին այս արդիւնքը ծանուցանելով Կրօնական Ժողովոյ ատենապետ Հօր, ի դիմաց Անդճանուր Ժողովոյ յանձնարարութիւն ըրաւ՝ որ անպակաս Հրաւիրէ նորընտիր Ժողովականները, և Քաղաքական ու Կրօնական Ժողովները միանալով՝ Տեղապահ մ'ընտրեն ու տեղեկագիրը Բ. Գուռը ղրկեն:

Ասկէջ յետոյ, ատենապետ էֆէնտին կարգաց Արսլանեան վսեմափայլ Ստեփան փաշայի մէկ Հրաժարագիրը, որով Նորին վսեմութիւնը Հրաժեշտ կուտայ ինչպէս ատենապետութեան ու երեսփոխանութեան՝ նոյնպէս Քաղաքական Ժողովոյ անդամակցութեան պաշտօնէ, և վերջապէս ազգային Հրապարակական կեանքէ՝ իւր անձնական տկարութիւնն ու զինուորական ծանրազբաղ պաշտօնավարութիւնը պատճառելով:

Ատենանը գոցուեցաւ ժամը 10-ին, և Ժողովականք ու ունկնդիրք մեկնեցան:

Փուլը Բ. 840, Նոյեմ. 24:

Այսուհետեւ ի 27-ն՝ Նոյեմբերի՝ Ազգ. Վարչութիւնն հաւաքուելով՝ հետեւեալ արդիւնքը ունեցաւ:

Նորընտիր Քաղաքական Ժողովոյ անդամ մեծապատիւ էֆէնտիներն երէկ Պատրիարքարան Ժողովեցան՝ Կրօնական Ժողովոյ ատենապետ Ս. Հօր Հրաւիրանօք, և նախ քան զամենայն իրենց զիւանը կազմեցին հետեւեալ կերպիւ:

Սիմոն պէյ Մագուտեան՝ Ա. Ատենապետ
Առաքել պէյ Յ. Տատեան՝ Բ. Ատենապետ
Միքայէլ էֆ. Մամիկոնեան՝ Ա. Ատենապիր
Սիմոն էֆ. Միքայէլեան՝ Բ. Ատենապիր

Ժողովոյն անդամներէն Խանտանեան Յակոր պէյ Հրաժարագիր ղրկեւ է՝ իւր զինուորական պաշտօնավարութեան ծանրութեան պատճառաւ, Խսկ Մանուկեան Մանուկ և Գափամաճեան Յարութիւն էֆէնտիները միայն այս անգամ՝ ներկայ չեն գտնուել, և կյուսամք թէ ուրիշ անդամներ իրենց պաշտօնին վրայ կգտնուին ազգասիրաբար:

Յետոյ քաղաքական ու կրօնական Ժողովներն միանալով՝ զազտնի քուէարկութեամբ Տեղապահ ընտրեւ են՝ Գեոր. Տ. Նիկողայոս Ս. Արքեպիսկոպոսը, Եւ որովհետեւ, Նորին գերապատուութիւնը իբրեւ անդամ կրօնական Ժողովոյ ներկայ կը գտնուէր՝ բոլոր Ժողովողականք անմիջապէս շնորհաւորեւ, և խնդրեւ են որ սկսի վարել Տեղապահական պաշտօնը:

Այս ընտրութենէն անմիջապէս ետքը, ընտրական տեղեկագիրը գրուել ու ստորագրուել է՝ Գափու — Քեահնասի էֆէնտիին պատուիրուելով՝ որ այսօր Արտաքին Գործոց վսեմափայլ Պաշտօնէին ներկայացունէ առ ի վաւերացում:

Նորընտիր տեղապահ Սրբազանը՝ ծանօթ է մեր ազգայնոց շատերուն: Հատ տարիներ Ակնայ Առաջնորդութեան և Նիկոմիդիոյ ընդարձակ վիճակին պատրիարքական փոխանորդութեան պաշտօնները վարելէն յետոյ՝ մայրաքաղաքս եկած, երեսփոխանական Ժողովոյ կողմանէ Կրօնական Ժողովոյ անդամ ընտրուած, եկեղեցական երեսփոխան եղած, և Միջագիւղի քարոզչութեան պաշտօնին անցած է:

Խոնարհաբար կշնորհաւորեմք զՆորին գերապատուութիւնը, և կյուսամք թէ միշտ առաջի աչաց առնելով ազգին վիճակն ու պէտքը՝ ըստ այնմ՝ կփարէ իւր փափուկ պաշտօնը, և առաւել ևս յինքն կգրաւէ հասարակաց սէրն ու համակրութիւնը:

Յարգանք կշնորհաւորեմք նաեւ նորընտիր Քաղաքական պատկառելի Ժողովը, և աներկմիտ եմք թէ կրնայ օգտակար ըլլալ Ազգին՝ եթէ միշտ ներդաշնակութեամբ և անգուլ ու անձանձիր յարատեւութեամբ ընթանայ: Վաղաչեմք որ իւր բոլոր ուշն ու փոյթը ազգային հանրական խնդրոյ ընծաւ, և մասնաւորապէս դաստիարակութեան,

որոյ անունը կայ՝ ինք չկայ զժառանգարար բոլոր Ազգիս մէջ :

Իսկ մեզ՝ ժողովըրդեանս՝ անհրաժեշտ պարտ կ'մնայ յարգանք առ ազգային վարչութիւնն, և չեմք ան ու քաղաքական աջակցութիւն նորա ամեն ազգօգուտ գործոց ու ձեռնարկութեանց յաջողութեան և արդիւնաւորութեան համար :

Փետր. Թ. 844, Նոյեմ. 28.

Հետեւեալը ևս կարեւոր կ'համարինք հաղորդել ընթերցատէր և հետաքրքիր ազգայնաց՝ որ Փարիզոյ մէջ եղած Մուրատեան վարժարանի շէնքին նկատմամբ և այլ բաւական տեղեկութիւնք կ'մատակարարէ :

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐՇԱՆ

Բէրլ. Կ. Պետրոյ, 10 Նոյեմ. 1875.

. . . Խմբագիր,

Պատուական Օրագրոյդ 1086 Թուոյն մէջ՝ Լեւնդ — Թայմըն Թարգմանեալ հատուած մի կարգացի Մուրատեան վարժարանի վերայ :

Պատեհ անթի թողլով վերոյիշեալ գրութեան պատմական տուալին մասունքն, կանցնիմ այն կէտերու քննութեան՝ որք Գաղղիոյ վերջին պատերազմին ժամանակ և անկէ յետոյ մինչև ցայժմ Փարիզի Հայոց վարժարանին կը վերաբերին :

Պ. Նամակագիրն կըսէ թէ Մուրատեանի Տնօրէնութիւնն անոր հաստատութեան օրէն հետէ մէկ մասն միշտ վարձու տուած է, մէկ մասն ըսելով անշուշտ յօդուածագիրն կուգէ հասկնալ զպրօցին փողոցի վերայ եղած կտորին առաջին յարկն (երկրորդ յարկը տղոց յատկացեալ է) որովհետեւ տան դրան ձախ կողմն է անմիջապէս Մատուոյ, և աջ կողմն՝ որ կէս յարկ մի կը ներկայացնէ՝ ըստ Փարիզու սովորութեան, զոնապաւնըն ընտանեօքն հանդերձ կը բնակի. քիչ մ' անդին — նոյնպէս փողոցին վերայ վարի յարկը — կան երկու ըստ բաւականին զարգարեալ փոքրիկ սենեակք՝ որք խօսարան (parloir) և պէտք աւունն կը կրնն. ասոնց վերայ է պղտիկ դատիկսն

(appartement) մը՝ որ երեք հոգիէ — այս ինքն մայր մ' ու երկու տարիքն առած աղջիկէ բաղկացեալ ընտանեաց մը բնակարանն է խոհանարան միատեղ. — այս երկու կանայք աշակերտաց աւողջութեան ու հիւանդութեանց ժամանակ գովելի անձնութիւնութեամբ մը ընտանեկան սիրոյ զուրկ մնացող պանդխտացեղոց մայրական խնամքներն մատակարարելով կըբաղին, թէպէտ և ի մեծ մոռացութիւն հայրենեաց զիրկն վերադարձողաց :

Վերոյիշեալ դատիկսնին քով կան ևս փոքր ու մեծ հինգ խօց՝ որոց մին — այս է առաջին — հին կօշկաց շտեմարան է, ուրիշ մը — այս է ամենէն վերջինն ու մեծն — տղոց ճերմակեղինաց պահպանութեան յատկացեալ սրահ մի է. իսկ մէջ տեղն այլ պարապ մնացող երեք սենեակներն երբեմն երկրորդական Գաղղիացի վարպետին, Տաճկի Հօճային, և հիւանդապահ երկու քերոց բնակարանին մօտ գտնուելովն՝ անհանգիստ վիճակի մէջ գտանող աշակերտաց յատկացեալ են՝ ասոնց մէջ կրակարան ըլլալուն պատճառաւ — Ուրեմն ինձ կը մնայ համառօտ տեսութենէս վերջըն՝ միայն հարցանել յօդուածագիրն թէ՛ անդին ուրիշ ինչ տեղ մնաց վարձու տալու — Խօսքս վարժարանին բաց ժամանակին վերայ է, ինչպէս ևս ինքն կ'ըսէ —

Այս առաջին սուտ՝ զորս համբելու հօգն ընթերցողին ուշադրութեան ու համբերութեան կը յանձնիմ :

Նամակագիրն կը շարունակէ թէ՛ զպրօցիս Տնօրէնութեան հին սովորութեանց հակառակ՝ վարժարանն հիմայ վարձու տրուած չէ, և ըստ իւր կարծեաց՝ ասոր հակառակը պնդողներն ալ սուտ զրոյց են. Հիմայ նայինք թէ երկուքներնէս ո՞վ է կուսակցութեան մը կոյր գործի. — զի առաժը կըսէ՝ « առաժը զրուցողը չ'առաժը կը լսէ » :

Այլ շատանամ — նաև ընթերցողն ընդ իս — սոսկ յառաջ բերելու իբր անդիմադրելի փաստ յայսմ աւուր Փարիզի Մուրատեան վարժարանի մէկ մասին — այս է Գաղղիացի և Տաճկի վարպետաց ու անհանգիստ տղոց յատկացեալ սենեակներուն վարձու տրուած ըլլալուն թէ Բէրլինը հարուստ աղջիկ մ' ևս կը բնակի հօն և թէ զա-